ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանի ԳԱ հիմնադրման բացումը և առաջին ընդհանուր ժողովը տեղի ունեցավ 1943 թ. նոյեմբերի 29-ին, Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում: Բացման խոսքում իսկական անդամներից ամենատարիքավոր ակադեմիկոս, լեզվաբան Ստեփան Մալխասյանցը հարտահայտեց բոլոր հայ գիտնականների, մտավորականության, ամբողջ հայ ժողովրդի անհուն բերկրանքը, Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպման առթիվ:

Ընդհանուր ժողովը ԳԱ առաջին պրեզիդենտ ընտրեց Հովսեփ Օրբելուն, փոխպրեզիդենտներ՝ Վիկտոր Համբարձումյանին և Վարդան Ղուլֆանյանին, նախագահության անդամ՝ Սահակ Կարապետյանին: Հասարակական գիտությունների բաժանմունքի նախագահ ընտրվեց Գրիգոր Ղափանցյանը, կենսաբանական գիտությունների բաժանմունքինը՝ Խաչատուր Կոշտոյանցը, ֆիզիկամաթեմատիկական և բնական գիտությունների բաժանմունքինը՝ Իվան Եղիազարովը, գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքինը՝ Միքայել Թումանյանը: ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Վլադիմիր Լեոնտևիչ Կամարովը ընտրվեց Հայկական ԽՍՀ ԳԱ պատվավոր անդամ: Առաջարկություն մտցվեց ակադեմիկոս-քարտուղարի ընտրությունը հետաձգել մինչև այն ժամանակ, երբ Երևանում կլինեն ակադեմիայի բոլոր անդամները, հանձնարարել նախագահությանը՝ ընտրել և հաստատել ԳԱ նախագահության գիտնական քարտուղար՝ ակադեմիկոս-քարտուղարի պարտականությունների համապատասխան մասը կատարելու համար: ԳԱ նախագահության 1943 թ. դեկտեմբերի 13-ի նիստում նախագահության գիտնական-քարտուղար ընտրվեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու Խաչիկ Մոմջյանը:

Ձեռնարկելով Հայաստանի ԳԱ գիտահետազոտական աշխատանքների լուսաբանմանը, արխիվային փաստաթղթերի ու նյութերի հիման վրա ընթերցողներին համառոտակի ներկայացնենք ակադեմիայի գիտակազմակերպական գործունեության երկու տարվա արդյունքների ընդհանուր բնութագրի վերաբերյալ որոշ վիճակագրական տվյալներ: Այսպես, 1944 թ. ԳԱ չորս բաժանմունքները ընդգրկում էին 28 գիտահետազոտական հիմնարկներ, որտեղ աշխատում էին ԳԱ 25 իսկական անդամներ և թղթակից անդամներ, 55 դոկտորներ և պրոֆեսորներ, 131 գիտությունների թեկնածուներ, 147 ավագ և 149 կրտսեր գիտաշխատողներ, 161 գիտատեխնիկական աշխատակիցներ՝ ընդամենը 668 հոգի: Եթե 1944 թ. սկզբին ԳԱ-ն ուներ 20 ասպիրանտ, ապա աշնանը՝ 47 ասպիրանտ: Դոկտորական դիսերտացիաներ էին պաշտպանել 6, իսկ թեկնածուական՝ 11 հոգի: Մարտ ամսին ստեղծված գիտական պրոպագանդայի խորհուրդը զգալի և արդյունավետ գիտալուսավորական աշխատանք ծավալեց հանրապետության բնակչության մեջ, կազմակերպելով դասախոսություններ, ռադիոելույթներ, հրապարակելով գիտահանրամատչելի հոդվածներ ու գրքույկներ: Անցկացվեց 356 դասախոսություն, որից հումանիտար գիտությունների գծով՝ 139, բնական գիտությունների գծով՝ 201 և լեկտորիումի գծով՝ 16, ընդգրկելով մոտ 28.807 մարդ, 13 ռադիո-ելույթ և այլն: ԳԱ ֆունդամենտալ գրադարանն ու նրա մասնաճյուղերը ունեին 123.563 գիրք ու 44.613 պարբերական, իսկ ԳԱ սիստեմում գտնվող 14 գրադարանների համար ձեռք էին բերվել 10.059 գիրք և 5.010 հանդես: 1944 թ. ընթացքում ակադեմիան հրատարակել էր 40 աշխատություն՝ 246,5 մամուլ ծավալով: Ակադեմիայի կենտրոնական ապարատին հանձնվեց Աբովյան փողոցի թիվ 61 շենքը, կառուցվեց բնակելի շենքի մի մասը, սկսվեց Բյուրականի աստղադիտարանի շենքի կառուցումը:

1945 թ. ԳԱ 38 գիտահետազոտական հիմնարկներում ընդգրկված էին 32 ԳԱ իսկական անդամներ և թղթակից անդամներ, 43 գիտությունների դոկտոր-պրոֆեսորներ, 154 գիտությունների թեկնածուներ, 130 ավագ և 151 կրտսեր գիտաշխատողներ, 182 գիտատեխնիկական աշխատակիցներ՝ ընդամենը 692 հոգի: Առ 1945 թ. դեկտեմբերի 31-ը ակադեմիան ուներ 84 ասպիրանտ, այդ թվում 6 հոգի՝ արտադրությունից չկտրված:

1945 թ. շարունակվում էին աշխատանքները ակադեմիական հիմնարկների նյութատեխնիկական բազան ամրապնդելու ուղղությամբ: Սկսվեցին Բյուրականի խոշոր աստղադիտարանի կառուցման աշխատանքները, ֆիզիկամաթեմատիկական ինստիտուտը Արագած լեռան վրա կազմակերպեց մշտական կայան-լաբորատորիա, Ջրաէներգետիկ ինստիտուտը ձեռք բերեց այնպիսի մեծ լաբորատոր բազա, ինչպիսին էր ջրաէլեկտրական լաբորատորիան և որի առաջին հերթի գործարկումը տեղի ունեցավ նոյեմբերի 20-ին:

ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող